

«ՏՈՆՏՈՆ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՍՊԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՎԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Ը

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025թ.

II-րդ եռամսյակ

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվել է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդի Որոշումով հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, Ներդրումային ընկերությունների հաշվային պլանի կիրառման հրահանգին և ներդրումային ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն ՍՊԸ-ի 2025թ. ապրիլի 1-ից հունիսի 30-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմված են Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվել և ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ օրենքին, Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերին համապատասխան:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է

ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, Ընկերության կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

բ. հիմնավորված գնահատումներ հաշվարկներ կատարելու համար,

գ. Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման, Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,

դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

ե. ֆինանսական հաշվետվությունները ընկերության գուրծունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար, եթե ներդրումային ընկերության ղեկավարությունը մտադիր չէ

կամ պատճառ չունի դիտարկելու ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը

«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն ՍՊԸ-ի կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունները բավարարում են Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների և «ՀՀ հաշվապահական հաշվառման մասին» օրենքի պահանջներին:

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունը պարունակում է բավարար չափով տեղեկատվություն, որպեսզի.

- ա) լինի տեղին՝ օգտագործողների կողմից որոշումներ ընդունելու համար,
- բ) լինի ապահովված ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվությունով
- գ) լինի արժանահավատ այն առումով, որ այն.

1. ճշմարիտ ներկայացնի կազմակերպության գործունեության արդյունքները և ֆինանսական վիճակը,
2. արտացոլի ոչ միայն իրավական ձևը, այլև իրադարձությունների տնտեսական բովանդակությանը,
3. չեզոք է, այսինքն զերծ է կանխակալությունից,
4. հաշվենկատ է,
5. ամբողջական է բոլոր էական դրսևորումներում:

«ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն ՍՊԸ-ն իր իրավասությունների սահմաններում, բավարար միջոցներ է ձեռնարկում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն տեղի չի ունեցել:

Էական սխալներ չեն բացահայտվել:

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Տնօրեն

Գոռ Առաքելյան

Գլխ. հաշվապահ

Ալիսա Սարգսյան

